ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 19.12. 2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 16-ը (տասնվեց):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
9. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
10. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
11. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
12. Լ. Մարտիրոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
13. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
14. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
15. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
16. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1.Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանին ծննդյան 75 ամյակի կապակցությամբ պարգևատրելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ տարկետումից վերադարձած ուսանող Ռուզաննա Հակոբյանի կրկնակի պրակտիկայի անցկացման ժամանակահատվածի և վայրի մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

3. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանին ծննդյան 75 ամյակի կապակցությամբ պարգևատրելու մասին

Պարոն Սերոբյանը ներկայացնելով մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանի ներդրումը համալսարանի զարգացման գործընթացում, գիտության բնագավառում և ծննդյան 75 ամյակի կապակցությամբ՝ Սերոբյանն առաջարկեց Ս. Սարգսյանին պարգևատրել անվանական հուշանվերով՝ ժամացույցով, ինչպես նաև բուհի 85-ամյակին նվիրված գիտական տեղեկագրի հոբելյանական համարում զետեղել Ս. Սարգսյանի լուսանկարն ու կենսագրականին նվիրված հատուկ էջ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Արժևորելով մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանի ներդրումը համալսարանի զարգացման գործընթացում, գիտության բնագավառում և ծննդյան 75 ամյակի կապակցությամբ Ս. Սարգսյանին պարգևատրել անվանական հուշանվերով՝ ժամացույցով:

Բուհի 85-ամյակին նվիրված գիտական տեղեկագրի հոբելյանական համարում զետեղել Ս. Սարգսյանի լուսանկարն ու կենսագրականին նվիրված հատուկ էջ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ տարկետումից

վերադարձած ուսանող Ռուզաննա Հակոբյանի կրկնակի պրակտիկայի անցկացման ժամանակահատվածի և վայրի մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ Ռուզաննա Հակոբյանն տարկետման իրավունքի ժամանակահատվածը լրանալուց հետո վերականգվել է հեռակա ուսման համակարգում, սակայն քանի որ հեռակա ուսման համակարգում նման կուրս չի եղել, բուհի կողմից նախարարություն նամակ է ուղարկվել դեռևս հոկտեմբեր ամսին և տարբեր հանգամանքներով պայմանավորնած պատասխանը ստացվել է երկու օր առաջ: Նամակում մեջբերելով որոշակի օրենք և հղում կատարելով այդ օրենքի որոշակի կետեր, թույլ են տալիս որ ուսանողը վերականգնվի առկա ուսուցման համակարգի չորրորդ կուրսի առաջին կիսամյակում: Տիկին Ավետիսյանը նշեց, որ Ռուզաննա Հակոբյանի հեռակա համակարգով վերականգնման հրամանին ի փոփոխումն նոր հրաման պետք է տրվի, ուսանողուհուն վերականգնելու առկա ուսուցման համակարգում: Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ուսուցման համակարգերի փոփոխությամբ պայմանավորված դասընթացների տարբերությունները կազմում են 26 կրեդիտ, որից 6 կրեդիտը պրակտիկաներն են, ուստի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից կազմվել է անհատական ժամանակացույց 4 և 5 շաբաթյա կրկնակի պրակտիկաների անցկացման նպատակով:

4 շաբաթյա պրակտիկայի Iփուլ-13.01.2019թ.-10.02.2020թ. -Գյումրու 11-րդ հիմնական դպրոցում

II փուլ-17.02.2020թ.-20.03.2020թ.-ՇՊՀ ավագ դպրոցում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանի կարծիքով կրկնակի պրակտիկայի օրերը համընկնում են համալսարանում դասապրոցեսների ընթացքին, որն էլ նպատակային չէ, այսինքն ուսանողը ստիպված դասերից պետք է բացակայի, որպեսզի կրկնակի պրակտիկային մասնակցի, ուստի կարելի է քննարկել IV կուրսերում հերթերի փոփոխության հարցը:

Քննարկումների արդյունքում պարոն Սերոբյանը առաջարկեց, որ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատու Ի. Շուխյանը ճշգրտի, թե մարզի հիմնական դպրոցներից որոնք են II հերթով աշխատում, որպեսզի առաջիկայում կուրսերի հերթերը նշանակելիս դրանք համապատասխանեցնել մարզի այն հիմնական դպրոցների հերթերի հետ, որտեղ անցկացվում են բուհի պրակտիկաները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Ռուզաննա Հակոբյանի անհատական ժամանակացույցը:
2. Հանձնարարել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատու Ի. Շուխյանին՝ ճշգրտելու և առաջիկա ռեկտորատի նիստին ներկայացնելու II հերթերով աշխատող մարզի ավագ դպրոցներին, որպեսզի այսուհետ համալսարանում կուրսերի հերթերը նշանակելիս դրանք համապատասխանեցնել մարզի այն ավագ դպրոցների հերթերի հետ, որտեղ անցկացվում են բուհի պրակտիկաները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

3.1 ԼՍԵՑԻՆ՝

Համալսարանի հյուրատան հնարավոր գործարկման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ արդեն բավականին ժամանակ է, որ աշխատում են գործարկել համալսարանի հյուրատունը և իր կողմից այժմ աշխատանքներ են կատարվում այս ուղղությամբ, առանձնապես հանդիպելու է Գյումրի քաղաքի հյուրատների համապատասխան աշխատակիցների հետ և հնարավորության դեպքում նվազագույն գումարներով հնարավորություն ստեղծել գործարկելու հյուրատունը, որպեսզի այս ոլորտից բուհի բյուջե ևս սկսեն մուտք գործել որոշակի գումարներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Լ. Մարտիրոսյանը, որը մարզի զբոսաշրջության հետ կապված հարցերին լավ տիրապետում է, լինելով այդ ոլորտի մասնագետ՝ ռեկտորատի անդամներին ծանոթացրեց Գյումրի քաղաքի մի շարք հյուրատների գնացուցակներին ու նրանց պայմաններին՝ նշելով, որ բուհի հյուրատունը գործարկելիս այն իր կարծիքով կարդարացնի սպասելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հավանության արժանացնել պարոն Սերոբյանի առաջարկը համալսարանի անունից բանակցելու Գյումրի քաղաքի հյուրատների համապատասխան մասնագեների հետ՝ ոլորտն ուսումնասիրելու նպատակով և հնարավորության դեպքում առաջիկայում նվազագույն գումարներով գործարկելու համալսարանի հյուրատունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

16 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի ՊԿ՝ Լ. Մարտիրոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.նիրավ.ապահովման
բաժնի ղեկ՝ Ա. Հովհաննիսյան